

ՄԵՂՈՒ 2020

հայերենը բոլորի համար

«Մեղու 2020» մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ քայլերը

1 Վճարել մասնակցության համար 970 դրամ

ՎՏԲ բանկի 16044015767700 հաշվեհամարին:

Վճարումը կարելի է կատարել թե՛ բանկի մասնաճյուղերում, թե՛ առցանց բանկային համակարգով:

Բանկային վճարում կատարելիս անհրաժեշտ տեղեկություններն են՝

- Նպատակը՝ «Մեղու» մրցույթի մասնակցության վճար,
- աշակերտի անուն, ազգանուն, հայրանուն, դասարան, դպրոց, համայնք, մարզ:

Կարելի է վճարել նաև հետևյալ վճարային համակարգերով.

- **Թելսել**՝ «Այբ» հիմնադրամի «Մեղու» մրցույթի պատուհանում,
- **Իզի Փեյ**՝ «Այբ» հիմնադրամի «Մեղու» մրցույթի պատուհանում:

«Թելսել» և «Իզի Փեյ» վճարային համակարգերով կարող եք վճարել թե՛ տերմինալներով, թե՛ Էլեկտրոնային դրամապանակի միջոցով (Telcell Wallet, EasyWallet): Համակարգը պահանջում է մուտքագրել **դպրոցի ծածկագիրը**, որը կարող եք ճշտել դպրոցից կամ գտնել «Մեղու. հայերենը՝ բոլորի համար» մրցույթի կայքի «Հղումներ և ռեսուրսներ» բաժնում տեղադրված **«Դպրոցների ծածկագրերի ցանկ» սիջքից**: Դպրոցի ծածկագրից բացի՝ պետք է նշել աշակերտի ազգանունը, անունը, հայրանունը, դասարանը, վճարողի հեռախոսահամարը:

2 Վճարման կտրոնը դպրոց ներկայացնել և ներառվել դպրոցի մասնակիցների ցուցակում:

Եթե դասընթացն առցանց է կազմակերպվում, կարող եք անդորրագրի Էլեկտրոնային տարբերակը (Էլեկտրոնային կտրոն, թղթային անդորրագրի տեսապատճեն, ընթեռնելի արված լուսանկար) ուղարկել դպրոցի՝ «Մեղու» մրցույթի պատասխանատուին:

Վճարման կտրոնը դպրոց ներկայացնելու **վերջնաժամկետն է դեկտեմբերի 5-ը**:

Դպրոցները «Մեղու» մրցույթի մասնակցության Էլեկտրոնային փաթեթը պետք է ուղարկեն «Այբ» հիմնադրամի contests@ayb.am Էլիասցեին մինչև դեկտեմբերի 7-ը:

Դպրոցի մասնակցության փաթեթում պետք է լինեն՝

1. «Մեղու 2020» մրցույթի մասնակցության հայտը,
2. մասնակիցների ցուցակը,
3. վճարման անդորրագրերի Էլեկտրոնային նմուշները:

Դպրոցի հայտի և մասնակիցների ցուցակի ձևանմուշները կարող եք ներբեռնել meghu.am կայքի «Հղումներ և ռեսուրսներ» բաժնից:

Մրցութային հարթակում գրանցվելու քայլերը կներկայացնենք հաջորդիվ: